

250 B

Թիւ 24277
Փետր. 22, 1974

Արժանաշնորհ
Տ. Արսէն Քնյ. Պարսամեան
Հովհիւ Ս. Ցակոր Հայց. Եկեղեցւոյ
Նախազահ ծխական Խորհուրդի
Ուշմընտ, Վա.

Սիրելի Տէր Արսէն,

Ստացած ենք Փետրուար 7, 1974 թուակիր 2եր տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ 2եր նախազահութեամբ Յունուար 27ին գումարուած հա-
մայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի չորս
անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝
կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմա-
կան Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորըն-
տիր անդամոց ստացած քուէներու գումարը, նորընտիր Դիւանի անդամոց
եւ Եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու վարչութեանց ասենապեաներու ա-
նունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Փիթըր Կրին
Տոքթ. Մուրաս Ջրնէրեան
Մովսէս Թաշնեան
Վահէ Կարապետեան